ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Armenian
Chess Federation

ARMENIAN
CHESS FEDERATION

0025, Հայաստան, Երևան, Խանջյան 50,
Հեռ./ֆաքս՝(374)10-570758
Էլ.հասցե info@chessfed.am

50, Khandjian Str., 0025, Yerevan, Armenia
Tel./Fax: (374)10-570758
E-mail: info@chessfed.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ № 5

«14» Մարտի 2023

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ ԵՎ ՇԱԽՄԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կանոնադրության 8.16, 8.17 և 8.19.1 կետերով.

1. Հաստատել մինչև 16 տարեկան պատանիների և աղջիկների տվյալների բազան, որտեղ կլինի շախմատիստներին վերաբերող ամբողջական ինֆորմացիան:
2. Հաստատել շախմատի որակավորման կարգերի չափորոշիչները:
3. Խստորեն հետևել հաստատված չափորոշիչներով սահմանված կետերին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մարտի 15-ից:

Որակավորման կարգերի չափորոշիչը, ինչպես նաև տեղեկատվական բազայի օրինակելի ձևի հավելվածները կցվում են որոշմանը:

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ՝
Սերժ Սարգսյան

Հաստատում եմ

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի

առաջին տեղակալ՝ Մարատ Էպուտյան

Հավելված 1

Չափորոշիչներ

շախմատի որակավորման կարգերի

Մրցաշարերի անցկացում.

- Որակավորման մրցաշարեր անցկացնել swiss-manager շախմատային ծրագրով:
- Մրցաշարերի կազմակերպիչները պետք է օգտվեն Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կողմից երաշխավորված մինչև 16 տարեկան շախմատիստների վերջին թարմացված բազայից: Ընդ որում յուրաքանչյուր երեխայի տվյալների մեջ լրացնեն անհատական համարը՝ (ID-ն): Չունենալու դեպքում մրցաշարի առաջին կեսի ընթացքում դիմեն որակավորման հանձնաժողովին և ստանալով ID-ն՝ ավելացնեն մրցաշարի մեջ: Կարգավորումներից բացեն ազգային համարները, որպեսզի սկզբնական ցուցակում այն երևա:
- Վերնագրում պետք է նշեն վայրը (հասկանալի ձևով)՝ որտեղ անցկացնում են մրցաշարը (քաղաք, վարչական շրջան կամ մարզադպրոց):
- chess-results.com շախմատային կայքում տեղադրեն մրցաշարի ամբողջ ընթացքը և թարմացումները կատարեն յուրաքանչյուր տուրի ավարտից հետո:
- Մրցաշարի swiss-manager ֆայլի մեջ լրացնեն մրցաշարի կազմակերպիչի, մրցավարի տվյալները, նշեն մրցաշարի սկիզբը, ավարտը, ժամակարգը և գործող էլեկտրոնային հասցե:
- Մրցաշարի ավարտից հետո կարգերի փոփոխությունները, ինչպես նաև ցուցակներում նկատած թերությունները և ավելացումները ուղարկեն հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին (նշված է ամենաներքևում):

Քայլերի գրանցում.

Մասնակցի կողմից պարտիայի քայլերի գրանցումը՝

Որակավորման կարգեր	Պարտադիր է	Պարտադիր չէ
4-րդ կարգի որակավորման մրցաշար		V
3-րդ կարգի որակավորման մրցաշար	V	
2-րդ կարգի որակավորման մրցաշար	V	
1-ին կարգի որակավորման մրցաշար	V	

- 3-րդ, 2-րդ և 1-ին կարգի որակավորման մրցաշարերին թույլ չտալ մասնակցել այն շախմատիստներին, ովքեր չեն կարողանում գրանցել շախմատային պարտիայի քայլերը:

Տուրերի քանակ.

Որակավորման կարգեր	Ամենաքիչը
4-րդ կարգի որակավորման մրցաշար	8 տուր
3-րդ կարգի որակավորման մրցաշար	8 տուր
2-րդ կարգի որակավորման մրցաշար	9 տուր
1-ին կարգի որակավորման մրցաշար	9 տուր

- Երևան քաղաքի բոլոր որակավորման մրցաշարերում թույլ տալ միայն մեկ անգամ անցկացնել օրական 2 տուր: Միայն 4-րդ կարգի համար անցկացվող որակավորման մրցաշարում թույլատրել մրցաշարը անցկացնել օրական 2 տուրով:
- Մարզերում 4-րդ և 3-րդ կարգերի համար անցկացվող մրցաշարերը պետք է տևեն առնվազն երեք օր, իսկ 2-րդ և 1-ին կարգերի համար անցկացվող մրցաշարերը՝ չորս օր:

Ժամակարգ.

Որակավորման կարգեր	Ֆիքսված	Հավելումով
4-րդ կարգի որակավորման մրցաշար	Առանց ժամացույցի	Մրցաշարի սկզբից 40 րոպե անց տեղադրել ժամացույց 10ր + 5 վրկ
3-րդ կարգի որակավորման մրցաշար	60 րոպե	Կամ 40 ր + 30 վրկ
2-րդ կարգի որակավորման մրցաշար	90 րոպե	Կամ 60 ր + 30 վրկ
1-ին կարգի որակավորման մրցաշար	90 րոպե	Կամ 60 ր + 30 վրկ

Անհարգելի բացականեր.

- Որակավորման մրցաշարերում անհարգելի բացակայող շախմատիստներին չթույլատրել հաջորդ երեք ամիսներին մասնակցել մրցաշարերին: Որը ուժի մեջ է մտնում մոտակա ամսվա ամսի 1-ից՝ ցուցակները հրապարակելու պահից:
- Մրցաշարի կազմակերպիչը կամ գլխավոր մրցավարը որակավորման հանձնաժողովին պետք է ուղարկի անհարգելի բացակայող մասնակիցների ցանկը:
- Անհարգելի բացակա է համարվում այն դեպքը, երբ շախմատիստը, առանց տեղեկացնելու չի ներկայանում հերթական տուրին և այդ պատճառով իր մրցակիցը ստանում է +, որը էականորեն դժվարացնում է որակավորման կարգ լրացնելը:
- Վերահսկողությունը թողնել Հայաստանի որակավորման հանձնաժողովին:

Հավելված 2

Որակավորման կարգեր լրացնելու պահանջներ.

Որակավորման կարգեր	Նույն կարգերով	Խառը
4-րդ կարգի որակավորման մրցաշար	75 %	Ըստ հավելվածի
3-րդ կարգի որակավորման մրցաշար	75 %	Ըստ հավելվածի
2-րդ կարգի որակավորման մրցաշար	75 %	Ըստ հավելվածի
1-ին կարգի որակավորման մրցաշար	75 %	Ըստ հավելվածի

- Որևէ այլ կարգի պահանջից կես միավոր պակաս ձեռք բերած շախմատիստներին չթույլատրել պայմանականորեն մասնակցել ավելի բարձր որակավորման մրցաշարի։
- Բացառություն կատարել միայն աղջիկ մասնակիցների համար, սակայն մասնակցության իրավունքը սահմանափակել մեկ մրցաշարով։
- Թույլատրել որակավորման կարգերը ֆիքսել մինչ մրցաշարի ավարտը։ 4-րդ և 3-րդ կարգերի դեպքում մինիմալը 8 տուր, 2-րդ և 1-ին կարգերի համար՝ 9 տուր։ Ընդ որում մասնակիցը ինքը պետք է գլխավոր մրցավարի ուշադրությունը գրավի այդ հանգամանքի վրա։
- Եթե տվյալ շախմատիստը 3 անգամ հավաքել է համապատասխան նորմայից 0,5 միավոր պակաս, ապա նրան նույնպես շնորհել համապատասխան կարգը։
- Մրցաշարի ընթացքում մեկ + ստանալը, երբ մրցակիցը չի ներկայանում խաղին՝ հաշվել հաղթանակ։
- Եթե մասնակիցը ստանում է bye պետք է այդ պարտիան համարել հաղթանակ, իսկ որակավորման կարգը ստանալ, ըստ մյուս տուրերի մրցակիցների որակավորման կարգերի թվաբանական միջինի։
- Երկու + ստանալու դեպքում մասնակիցը իրավունք չունի ստանալ որակավորման կարգ։
- Արգելել որևէ որակավորման մրցաշարի հետագա ընթացքից հանել այն մասնակիցներին, ովքեր մրցաշարի ընթացքում հավաքում են որակավորման համար անհրաժեշտ միավորները։

Ուշադրություն.

Վերը նշված պահանջները թերի կատարելու դեպքում որակավորման հանձնաժողովը կարող է չընդունել տվյալ մրցաշարի արդյունքները և չհաստատել կարգերը։